# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am


07.03.2013թ. N

## Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն   Ո Ւ Ղ Ե Ր Ձ
### *ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ*

Ջերմորեն շնորհավորում եմ տարվա նշանակալի տոներից մեկի՝ Կանանց տոնի կապակցությամբ:

Գարնանային գույների խտացումն իր մեջ յուրովի արտահայտող այս օրվա առիթով շնորհավորում եմ բոլոր կանանց ու աղջիկներին և ցանկանում, որ նրանց հոգում մշտապես թևածեն խինդն ու բերկրանքը:

Այս տոնի բոլոր բարեմաղթանքներին զուգահեռ պետք է անսահման մեծարանքի ու ամենաբարձր գնահատանքի արժանացնենք իր ուրույն կերպարով և դիմագծով մշտապես աչքի ընկնող հայ կնոջն ու բարձրաձայնենք նրա վեհ նկարագրի բացառիկ բնորոշումները, որոնք յուրօրինակ կերպով զարդարել ու արժևորել են մեր ժողովրդի պատմության բազում դրվագներ:

Թո՛ղ որ, այս ինքնատիպ տոնն իր ողջ կատարելությամբ դրական ազդակներ հաղորդի բոլոր մայրերին, կանանց, քույրերին ու աղջիկներին՝ նրանց պարգևելով անսահման սիրո և երջանկության հաճելի զգացումներ:

Ամենայն անկեղծությամբ և մեծագույն պատկառանքով դարձյալ շնորհավորում եմ Կանանց տոնի առիթով:

*Հարգանքներով*

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ